

# ԿԱՐԱՆԻՐ ԱՆԵՎ



491.99-8  
7-98

Կարսի  
ԳՈՒՐԳԱՐՅԱՆ

ԸՆԹԵՐՅԱՐԱՆ  
ԱՌԱՋԻՆ ՑԱՐԻ

4 APR 2013

1005-10

91.99-8  
2-98  
կր.

ՀՅԵՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԵԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՆԵՐԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՒ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑՆԷ.

428  
91-ԴՈ

# ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

(Բ. սպ. վերամշակած լիզ լացրած)

Կազմեց Մ. ԴՈՒՐԳՆԱՆ



### 3. Ճուտիկ

Կր՛տ-կր՛տ, կրտկրտան,  
Յեկավ ճուտս ճրտճրտան.  
Հալածվել է ուրուրից,  
Բաժանվել է իր մորից.  
Ճրտճրտում է ու լալիս,—  
Կորած մորն է ման գալիս:

### 4. Ի՞նչն է լավը

Կատուն ասավ.—Ամենից լավը կաթն է. ասենք՝  
մուկն ել վատ չե, բայց բռնելը դժվար է:

Աքլորն ասավ.—Կաթն ի՞նչ է, այ թե մի բուռը  
կուտ լինե՞ր...

Չամբարն ասավ.—Դուք ել բանի անուն տվիք,  
ելի. անի, վոսկոր, ջան վոսկոր...

Այծն ասավ.—Ինձ հարցնեք, մի փունջ խոտը  
ամենից լավն է:

Իսկ դուք ի՞նչ բան եք սիրում:

Մսակերներ.—Շուն, գայլ:

Խոտակերներ.—Կով, այծ, ուղտ:


### 5. Մուկիկը

Մեծ մուկը և նրա փոքրիկ ազջիկը սոված  
էյին: Մառանում մի թակարդ տեսան. թակարդի  
մեջ պանրի կտոր եր կախած: Պանրի հոտը դիպավ  
մուկիկի թիթին:

— Մայրիկ, մայրիկ, տես, ինչ լավ պանիր է  
կախած այնտեղից:

Մայրը տեղից չըշարժվեց:

— Եհ, ինչ կըլինի, վոր մոտենամ, մի քիչ հոտ  
քաշեմ,—ասաց մուկիկը և առանց սպասելու մտավ



Թակարդը, ատամներով բռնեց պանրից ու պինդ  
քաշեց:

Թրճիկ... փակվեց թակարդի դուռը:

Ել ո՞ւմ են վորսում թակարդներով:

### 6. Հովիվը

Մարի լանջը մահճակալ,

չեչոտ բարը զլխակալ,

մի հին կարպետ ուսերին. —

այս է հովվի անկողին...

Յերբ անձրևն է կաթկաթում,

ու կարպետն է թրխկթրխկում, —

հովիվն անուշ քնի մեջ

բաղբը յերագ է տեսնում:

Ուխայ, ուխայ

սիրուն հովիվ,

բունդ անձը...

Կահկարասի.—Մահճակալ, պահարան, աթոռ:

Հանելուկ.—Չորս յեղբայր մի դղակ ունեն:

### 7. Փոքրիկ նկարիչը

Հենց վոր Աշոտի ձեռքը ածուխ կամ կավիճ եր ընկնում, սկսում եր նկարել հատակին, պատերին, դռներին:

Այսոր նա վորոշել է գազանանոց նկարել. շնիկին ել կանչում է, վոր իր նկարածը տեսնի:

Ահա պատի վրա յերևաց մի հավ, հետո խոզուկ, կատու, նապաստակ ու ամենից վերջը՝ մի մեծ ուղտ:

Շնիկը սուս ու փուս նայում եր:

Բայց յերբ Աշոտը վերջացրեց գազանանոցն ու ուրախությունից ծափ տվեց, շնիկը հաջեց ու փախավ:



### 8. Ով է բացակայում

Մեր դասարանի պատին կախած է աշակերտների ցուցակը. հերթապահներից մեկը ամեն որ պարապմունքների կեսին նշանակում է թե յեկող-

ներին, թե բացականերին, թե ուշացողներին: Յեթե յեկել է՝ վանդակում նշանակում են+, չեկողի վանդակում դնում են—, իսկ ուշացողներին կետով «.» են նշանակում, վորը հետո դարձնում են + կամ—: Մեր մյուս խումբն այդ բոլորը գույներով է նշանակում. վանդակները ներկում է կարմիր, կապույտ, կանաչ գույներով: Ամսի վերջին որը հաշվում ենք՝ ով քանի որ է յեկել, բացակայել կամ քանի անգամ է ուշացել: Կիրակի և տոն օրերի նշանները չենք մտցնում ամսական հաշվի մեջ, վորովհետև այդ օրերը դպրոց հաճախելը կամավոր է.

Ահա մեր ամսական տախտակը:

#### ՆՈՅՆՄԲԵՐ

Ամսն	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30
1) Արժվել	+	+	+	+	+					+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	
2) Գրիգ	-	.	-	-	-					.	+	+	+	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	
3) Մանուշ	+	+	+	+	+					+	+	+	-	-	-	.	+	+	+	.	.	.	+	+	+	-	.	.	-	
4) Նինել	+	+	+	+	+					+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	
5) Ապարտակ	-	.	.	.	+					.	+	-	-	-	+	+	-	-	-	+	+	+	+	+	-	-	+	.	+	

Հաշիվ ամսական տախտակների համար—  
Մանուշը հաճախել է 20 օր, բացակայել է 6 օր, ուշացել է 7 անգամ:

Իսկ ինչպես եք նշանակում հաճախելն ու բացակայելը:  
Ի՞նչ պատճառներով եք բացակայում:  
Ի՞նչ միջոցների յեք դիմում ընկերների ուշանալու առաջն առնելու համար:

### 9. Թիրեոնիկի քեվերը

— Մայրիկ, սիրելի մայրիկ, մի թերթ թուղթ տուր ինձ:  
«Ի՞նչ ես անում թուղթը, անուշիկս»:

— Յես ինձ համար թղթից թևեր կըշինեմ, մայրիկ, թիթեռնիկ կըղառնամ:

«Յե՛վ կըթռչես թիթեռնիկի պես»:

— Այն, կըթռչեմ բարձր-բարձր, կըթռչեմ սար ու ձոր — ամեն տեղ...

«Իսկ յերբ հոգնես՝ ի՞նչ կանես»:

— Կըզամ բեզ մոտ, մայրիկ, թևերս կըհանեմ ու ելի Արփիկ կըղառնամ:






Իսկ յիժն ջաներ թե՛վերը, ի՞նչ կըղառնար:  
Մի շատն եր. — Թիթեռ, մեղու, ճանճ, բզեզ:

## 10. Աղջիկն ու տիկնիկը

Մի փոքրիկ աղջիկ լալիս եր:

Մի շատ գեղեցիկ տիկնիկ եր ստացել նա ընծա, և մի այնքան սիրուն, նագանի տիկնիկ... Բայց փոքրիկ աղջկա չարածճի յեղբայրները տիկնիկը խլել էյին, նստացրել էյին այգում մի բարձր ծառի վրա և իրենք փախել: Փոքրիկ աղջիկը չեր կարողանում տիկնիկին հասնի ու ցած բերի և դրա համար լաց եր լինում: Իսկ տիկնիկը ձեռները պարզել եր կանաչ ճյուղերի միջից և բոլորովին անբախտ եր յերևում:

Ո՛հ, խեղճ տիկնիկ:



Պատմեք բախանկեթի մասին

## 11. Ծիտիկն ու մուկիկը

Ծիտիկն ու մուկիկը ախպերացան: Գետի ափին բուն շինեցին, մտան մեջը:

Մի որ ծիտը գնաց քուջուջ անելու, յետ յեկավ, տեսավ մուկիկը կորել ե: Ծնկանը զարկեց, յոթը ճամպի մեջտեղը նստեց, հողը փորեց, տվավ գլխին ու ասավ.

— Վա՛յ, ախպեր ջան, վա՛յ:

Ձենի վրա լորիկն յեկավ.

— Ծիտիկ-միտիկ, չալ-փետուլրիկ, հողն ինչո՞ւ յես տալիս գլխիդ:

— Թա՛նւ, թա՛նւ, — ասավ ծիտը, —

յես վոր չտամ, ո՞վ տա հապա:

Մուկիկի պես ախպեր կորավ,

աշխարհն եսպես մնաց անտեր,

յես վոր հողը տամ իմ գլխին,

մե՞ծ բան ե...

Ա. ու ծ. — Նանը իր թանին թթու չի ասիլ:  
Կ են դան ին եր. — Մուկ, կատու, աղվես:

## 12. Փխիկի գանգատը

Փխիկը նստել	— Ի՞նչ անեմ հապա,
մի մուկ անկյունում,	վոր լաց չըլինեմ, —
ունքերը կիտել	գանգատ ե անում
ու լաց ե լինում:	Փխոն տըխրադեմ, —
Մոտիկ ե գալիս	են Համոն թագուն
մի ուրիշ կատու.	մածունը կերավ,
— Ինչո՞ւ յես լալիս,	գնաց տաաի մոտ,
այ փխիկ ջան, դու...	ինձ վրա դրավ:

Հիմի տատիկի  
յետևից ընկած՝  
ինձ են ման գալի  
մի-մի փետ առած  
են ըոթոթ Մուրենն,  
Անոն ու Մոսոն: —  
«Ո՞ւր ե, — ասում են, —

ո՞ւր ե գող Փխոն.  
ան, թե մի գտանք,  
մածուն ցույց կըտանք...»  
Եսպես բան սարքեց  
են Համոն իմ դեմ.  
Ի՞նչ անեմ հապա,  
վոր լաց չըլինեմ:

Խն դիր-կատակ. — Սենյակի ամեն մի անկյունում նստած ե մի կատու, ամեն մի կաավի դեմ նստած ե Յ կատու, ընդամենը քա- նի՞ կատու կա սենյակում:

## 13. Ժամացույցի լեզուն

Մեր տանը ամեն մեկը հասկանում ե ժամացույցի լեզուն:

Խփում ե ժամի վեցը. գիշերն անքուն լուսացրած տատիկը վեր ե կենում ու հագնվում:

Խփում ե ժամի իննը. պատլիկ Գառնիկը հավաքում ե իր պիտույքներն ու վազում ե մանկապարտեզ:

Խփում ե տասներկուսը. կեսոր ե. Մուրիկը վազում ե սեղանատուն. նրա յետևից պոչը շարժելով գնում ե շնիկը իր բաժինն ստանալու:

Ժամի յերեքին հայրիկը տուն ե գալիս. կարծես նա խոսքը մեկ ե արել ժամացույցի հետ. նրա բարեին՝ առաջինը ժամացույցն ե պատասխանում իր հարվածներով:

Բոլորն ել իրենց գործն անելիս հաշվի յեն առնում ժամացույցը:

Ի՞նչ լավ բան ե ժամացույցը:

Նկատեցեք՝ ի՞նչ եք անում դուք, ձեր տանեցիք ժամը 7-ին, 12-ին, 3-ին, 8-ին:

Նկատեցեք՝ ժամը 6-ը, 3-ը, 9-ը:

Ժամ անակի չափը.—Տարի, ամիս, շաբաթ, որ, ժամ, րոպե:

#### 14. Շուրայի նախակը

Շուրան ուզում ե իր ծանոթ ձիապանին նամակ ուղարկել և խնդրում ե վարժուհուն, վոր գրի:

Շուրան թելադրում ե, իսկ վարժուհին գրում ե.  
«Քեռի ձիապան, դու լավ ես աշխատում, դրա համար ել Շուրան քեզ պատկերներ ե նվիրում:

Դու տղա ունե՞ս. քո տղային յես մի շվի կոնվիրեն: Իսկ դու, քեռի, ատամներ ունե՞ս: Դու ձուկ ուտելիս փշերը հանիր, թե չե կրխեղզվես: Մեկ ել՝ չոր հաց մի ուտիլ, փափուկը կեր, թե չե ատամներդ կրկտորես: Փլավ ել կեր, քեռի, լավ ե, համով ե:

Դու կռիվ գնացել ես. կովում չե՞ս տեսել իմ յեղբորը. նա յել եր գնացել...

Քեռի, դու գարի ունե՞ս ձիերիդ համար: Տես, կոպիտ մի լինիլ, մի հայհոյի, մի ձեծի ձիերին. լավ կերակրիր նրանց: Իսկ յերը կրպռապես, ուժից կընկնես, ձիերդ տուր կառապան Սիմոնին. նա բարի յե, լավ կրխնամի նրանց:

Քեռի, կիրակի որը արի՝ մեզ ման ածա ձիով: Մեր փողոցն ե՝ Սորհրդային, № 7. Շուրա Կ.»:

Թելադրեք մի նամակ ձեր ծանոթին, բարեկամին. խնդրեցեք՝ թող վարժուհին գրի ձեր թելադրածը:

#### 15. Չեղավ

Գոհարիկը տեսավ, վոր փոքրիկ յեղբայրը յերկու խոշոր տանձ ունի ձեռքին, կանչեց ու ասավ.

— Գիգուշ, տես՝ ի՞նչ ե գրած գրքիս մեջ մի լավ տղայի մասին:

Գիգուշը շատ եր սիրում գրքի պատմությունները.—Կարդա՛, լսեմ,—ասաց նա:

Գոհարիկն ել սկսեց.

„Կար, չըկար, մի փոքրիկ տղա կար: Մազերը գանգուր, թշերը թխլիկ, անունն ել Գիգուշ“:

— Գիգուշ,—ուրախացավ յեղբայրը:

— Հա: „Նա ենքան բարի յեր, ենքան բարի: Մի որ մայրիկը նրան յերկու տանձ տվեց, մեծ-մեծ տանձեր, փափուկ, քաղցր, ինչպես շաքար“:

— Եսպես, հա,—ցույց տվավ Գիգուշն իր տանձերը:

— Հա: „Տղան գնաց քույրիկի մոտ ու ասավ.

— Գոհարիկ ջան, ես պատիկ տանձը ինձ, մեծը քեզ“:

— Եհ, եդ ի՞նչ պատմություն ե. դրո՞ւստ եղպես եր ասում Գիգուշը:

— Հա,—պատասխանեց Գոհարիկն ու սպասում եր, թե ի՞նչ կանի յեղբայրը:

Հրաշյան ամեն բանից խաղալիք կը շինի. ձվի կճեպ-  
ների վրա նկարում է դեմքեր, թղթի գլխարկներ  
հագցնում ու ծաղրածուներ է դարձնում. նույն  
խակ իր մատներին է շորեր հագցնում, նրանց պար  
ածում, իրար հետ կովեցնում:


Բոլորը սիրում են Հրաշյային և ուրախանում  
են, յերբ նա գալիս է:

«ԲՆԱՍԵՐԸ»

Սա մի ութ տարեկան աղջիկ է. վարժուհին մի  
որ այդպես անվանեց ու բոլորս նրան «Բնասեր»  
անունը կպցրինք, վարժուհեան բնությունը շատ է  
սիրում: Միշտ նրա ձեռքին կամ կրծքին ծաղիկ-  
ներ կը տեսնենք. թիթեռների բոլոր տեսակները ճա-  
նաչում է. ամբողջ ամառը նա շերամ էր պահում,  
կերակրում էր վորդերին. հարսնյակներին  
մի քանիսը դպրոց բերեց:

Յերբ մենք զբոսանքի յենք գնում, նա շատ է  
ուրախանում. վազվզում է, յերգում, պարում...  
նույն խակ լողալ գիտի:

Նա մեզ շատ անգամ ոգնում է, յերբ տերևներ  
ենք հավաքում կամ ծաղիկներ ենք շորացնում:



17. Յէրբ է լինում

Դաշտը մերկանում, քամին է խաղում,  
որը կարճանում, անձրևը մաղում:  
Այս յէրբ է լինում:

Յե՞րբ են գիշերն ու ցերեկը հավասար լինում:  
Վորո՞նք են աշնան ամիսները:



18. Աշուն

Դաշտ ու այգի  
դեղին հագան,  
ծառ ու ծաղիկ  
մերկացան.

Թռչունները  
յերամ-յերամ  
մեր աշխարհից  
հեռացան:

Որը մռայլ—  
ցուրտ ու տխուր,  
բարակ անձրևն  
է մաղում.

մեզն է պատել  
սար ու բլուր,  
ել մարդ չկա  
դաշտերում:

Աշնանը ի՞նչն է գեղեցիկ.—Նկարեցեք Վող թռչունների յերամ-  
ներ:

Հանելուկ.—Որան որան շուռ է գալիս, փոսներ չունի—ման  
է գալիս, բերան չունի—կուլ է տալիս.

## 19. Ո՞վ եւլ յես

Յես յեկա և պտղատու ծառերը զարդարեցի հասած խնձորներով, տանձերով, սալորով ու դեղձով: Հասավ և խաղողը, վորը շատ ուրախացրեց մանուկներին:


Յես ներկում եմ ծառերի տերևները դեղին ու կարմիր գույներով. նախշում եմ անտառը, թըռչուններին շտապեցնում եմ տաք յերկրներ գնալ՝ քանի շուտ է:

Յես գիտեմ, վոր ինձնից հետո ձմեռն է գալու: Իհարկե, դուք այժմ գիտեք՝ ո՞վ եմ յես:

## 20. Յեղեվնին

Սշուն է. Բոլոր ծառերը տկուր՝ տխուր անտառում դողում են, մրսում:

Յեղևնին միայն, կանաչով զուգված, ամուր կանգնել է ցուրտ քամու դիմաց:



## 21. Գորտն ու ագռավը

Գորտը ընկած ցամաք առուն, կրակրում էր ու կրակրում:  
— Քիչ կրակրո՞ւ, այ գորտ քեռի, աշուն կըգա՝ ջուր կըբերի,— հույս էր տալիս մի ծեր ագռավ:  
— Ե՛, ի՛նչ անեմ, սիրտս վառավ. մինչև ցամաք առուն ջուր գա, գորտի աչքն էլ հո դուրս կըգա:

Վո՞րտեղ են ապրում գորտերը: Տեսե՛լ եք գորտի ձվեր, շերեփուկ: Զրա՞յին կենդանիներ. — Ձուկ, խեցգետին, լորտուկ:

## 22. Պատրաստվեցեք

— Վայ նրան, ով իր գլխի ճարը չի տեսել,— ասաց ցուրտ քամին ու փչեց սարից գյուղ, գյուղից քաղաք:

— Հավաքե՛նք մեր կալը, թեղե՛նք,— շտապեց գյուղացին:

— Պետք է փայտ ճարել, ալյուր առնել,— մտածեց քաղաքացին:

— Ե՛հ, քիչ-քիչ պատրաստվե՛նք չվելու,— ասացին իրար արագիլները:

— Դու ի՛նչ ես դարդ անում,— ասաց արջը գայլին,— հորթ ու վոչխար՝ ինչքան կուզես... իմ գործն է դժվար:

— Այս շաբաթ բանջարանոցն ենք քանդելու, այգու պտուղներն ենք հավաքելու,— վորոշեցին աշակերտները:

— Վա՛յ, կորանք,— աղգացին ճանձերն ու կպան առաստաղին:

— Ներս, ներս,— ասացին մեղուններն ու փակվեցին փեթակում:

Ամեն մեկն իր անկյունն ունի, ամեն մեկն իր գլխի ճարը կանի, մինչև կանցնի ձմեռը:

Ինչպես են անցկացնում ձմեռը՝ ձկները, արջը, շոջիկը:

### 23. Ոգուտ յեվ վնաս

— Գրեցեք, յերեխաներ, ջրի ոգուտի ու վնասի մասին: Ով վորն ուզում է՝ թող գրի:

Շատերը գրեցին:

Ռուբրիկը գրել էր «Ջրի ոգուտը», իսկ Վազգենը՝ ֆլասը. ահա նրանց գրածը.

#### ՋՐԻ ՈԳՈՒՏՆԵՐԸ

1. Ջուրը խմում ենք.
2. Ջրում լողանում ենք.
3. Կերակուր ենք յեփում.
4. Լվացք ենք անում.
5. Ցեխ ենք շինում.
6. Ջրով ճանապարհորդում ենք.
7. Ջրնդացն ենք բանեցնում.
8. Ջրում ենք բույսերը.
9. Հրդեհն ենք հանգցնում:


#### Ռուբրիկ

Ընկերները չեյին խմանում՝ վորին հավանել, բայց յերբ ուսուցչի հետ մտածեցին, տեսան, վոր ջրի ոգուտները շատ-շատ են. առանց ջրի ամեն ինչ կրճեռներ, իսկ ջրի վնասների մեծ մասը կարելի չէ վերացնել, յեթե զգուշ լինենք, հասկանանք ու միասին աշխատենք:

Ինչ խմելքներ գիտեք:

Ինչպիսի ջրում կարելի չէ լողանալ:

Շինեցեք ջրաղաց պտավոդ անիվով: Շինեցեք թղթե նավակներ:



Մարդն ու գուրը.

պղնչագործ

ապակու գործարան

տակառագործ

մարդիկ գուրը (հեղուկներ) պահում են ամաններում. ամանները զինում են —

1 Խարից — Կտարան, ավազան

2 փայտից — տակառ, տաղտ.


3 թիթեղից — դույլեր.

կարաններ

5 յերկաթից, պղնչից-կաթասաներ

6 ապակուց-լիլ, բաժակ, ափսն.

Գործիքներն ոգնում են մարդուն:




### 25. Յե՛րբ ե լինում

Ձյուն կա դաշտերին, բուրն ե հեծեծում,  
սառույց գետերին. դռները ծեծում:  
Այս յե՛րբ ե լինում:  
Վո՞րոնք են ձմռան ամիսները:

### 26. Ծտի գուրպակերը

Ձմեռ եր. ծի-  
տը կծկվել եր,  
նստել ծառին.  
մրսում եյին  
նրա բարակ  
վռտիկները:  
— Ծի վ-ծի վ,  
գարուն վոր գա,  
ինձ համար  
գուրպա պիտի գործեմ. — ասում եր նա կաշաղակին:



Գարունը յեկավ. ծիտը թռչկոտում եր տերե-  
ների մեջ:

— Բա ինչո՞ւ գուրպա չես գործում, — հարցրեց  
կաշաղակը:

— Ի՛հ, — պատասխանեց ծիտը, — յես ո՞վ, գուր-  
պան ո՞վ:

Ձմեռը վո՞ր թռչուններն են չվում այստեղից:

### 27. Առաջին այրուց

Վայ, մայրիկ ջան, տես,  
բախն ու դուռը քի,  
ինչքան սպիտակ  
թիթեռ ե գալի:  
Եսքան շատ թիթեռ  
չեմ տեսել յես դեռ:  
— Ձե, իմ անուշիկ,  
թիթեռներ չեն եդ.  
Թիթեռներն անցան  
ձաղիկների հետ:  
Եդ ձյունն ե գալի,  
փաթին ե ձյունի,  
վոր կարծես սպիտակ  
թիթեռնիկ լինի:

Եւ ինչի՞ յեն նման ձյան փաթիլները:  
Նկարեցեք կամ թղթից կտրատեցեք ձյան փաթիլների ձևերը:

### 28. Ամեն մեկն իր գործն ունի

— Դե, բույրիկներ, իջնենք ցած. ծածկենք յեր-  
կիրը մեր բազմաթիվ ասեղներով ու աստղերով:  
— Բարձրանամ վառարանի վրա ու մումուացնեմ:  
— Տեսնես ձորերում մի հիմար նապաստակ չեմ  
ճանկի:



### 31. Եարժփող տունը

Յերբ պապս առաջին անգամ վերադարձավ կայարանից, զարմացած պատմում եր գնացքի մասին:

— Ամենից առաջ՝ նա իր գնալու ժամանակն ունի. քեզ յերեք անգամ զանգով կանչում ե. ուշացար—ուրեմն կրմնաս:

Ուզածդ ժամանակ չես կարող ցած իջնել. դու պետք ե իրան հարմարվես. կանգնեց՝ կիջնես. չե՛ հետը կրգնաս:

Վոչ ձի յե քաշողը, վոչ յեզ. վոչ ուտել կուզի, վոչ հանգստանալ. հարկավոր ե միայն վառել և առատ ջուր տալ:


Սա խոսմ կառք կամ սայլ չի, այլ մի շարժական տուն. վազում են իրար յետևից սենյակները, մեկը մյուսին քաշում, միասին շարժվում, միասին կանգ առնում. վայ թե մեկը հերթից դուրս յեկավ.— կրմնաս:

Ես քաղաքում աչքդ խփում ես, բաց ես անում— մի ուրիշ քաղաքումն ես:

Առաջ յեթե յերեք որում եյիր գնում, հիմա կես որն ել բավական ե նույն ճանապարհն անցնելու համար: Միայն չհասկացա, թե ինչնու մեկ-մեկ ձեներ գլուխն ե գցում ու գոռում, սուլում, սար ու ձոր թնդացնում:

Իսկ դուք ի՞նչ եյիք զգում առաջին անգամ գնացք նստելիս:

Հանելուկ.— Եարժական տուն, անչունչ յեզներ, իրար կպան—անցան սարեր:



### 32. Յերբ ե լինում

Ձյունըն ե հալչում, ծաղիկը ծաղկում,  
խոտը կանաչում, որը յերկարում:

Այս յերբ ե լինում:

Ել ի՞նչ ե լինում զարնանը,  
Վորո՞նք են զարնան ամիսները:

### 33. Արագիչները

Հեռու աշխարհից, տաք յերկրներից շարան-շարան յեկան արագիչները, նստեցին բարձր ծառերին, կտուրներին ու ձայն տվին.

«Գարուն ենք բերել, արև ենք բերել.  
հեռու աշխարհից բարև ենք բերել:

Տեսան մանուկները, առաջ վազեցին ու պար բռնեցին:

— Արագիչ, բարով յեկար, դու մեզ զարնան նշան բերիր,  
այ արագիչ, բարով յեկար, մեր սրտերը ուրախացրիր:

Ինչո՞ւ յն սիրում արագիչին:

Ձվոդ թ ու չ ու լ ն ն եր. — Արագիչ, ծիծեռնակ, սոխակ:

Ձ մ ե ո ո դ թ ո չ ու լ ն ն եր. — Ծիտ, ազոավ, կաշաղակ:

34. Չնձաղիկ

Մառ ձյունի սառը գրկում մի ծաղիկ է ծյուն, ծաղկում. թերը քնքուշ, թերը սիպտակ, աչիկները բաց կապուտակ. Չյուն ու ծաղիկ... այ քեզ զարմանք. ձյուն ու ծաղիկ ունին մի կյանք. դա ձմեռվան մի ծաղիկ է. ձյունից ծնված՝ ձնծաղիկ է:



Ծաղիկներ. — Վարդ, հասմիկ, մանուշակ, շուշան, մարգարիտ, մեխակ:

35. Պահապաններ

Գարուն է, արևն այրում է: Պապիկը նստած՝ արկղ է շինում տախտակներից:  
 — Ի՞նչ էս անում, Պապիկ:  
 — Տնակ էմ շինում, տնակ, շուտով պահապանները կըգան, պետք է տեղ տալ նրանց:  
 — Ի՞նչ պահապաններ, ովքեր են:  
 — Մի՞թե չգիտեք. մեր ժիր, խելոք սարյակները, վոր մաքրում են բանջարեղենը վորդերից ու խիտունջներից:

**ՊԱՇՏՊԱՆԵՑԵՔ ՍԱՐՅԱԿՆԵՐԻՆ**

Նւ վո՞ք թռչուններն են մեր բարեկամները:  
 Յերգող թռչուններ. — Սոխակ, դեղձանիկ, սարյակ, արաուտիկ:

36. Բնության որացույց

Մարտ

○ պարզ ● ամպ ⊙ անձրև ☆ ձյուն △ խառն

Յերկուշաբթի	Յերեքշաբթի	Զորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ	Շաբաթ	Կիրակի
						1
2	3	4	5	6	7	8
9	10	11	12	13	14	15
16	17	18	19	20	21	22
23	24	25	26	27	28	29
30	31	<p>Մին հազնում է սպիտակ, մին կանաչին է տալիս. մի որ ցուրտ է, մի որ տաք, մին խնդում է, մին՝ լալիս:</p>				

Վանդակներում նշանակեք որերը համապատասխան նշաններով. հաշվեցեք՝ քանի՞ որ է յեղել մարտ ամսում անձրև, արև, խառն, ամպ, ձյուն:

### 37. Ծիտիկի յերգը

Յես ծիտիկ եմ,	լայն աշխարհի
Ղան, ծիտիկ եմ,	սրտից առատ
ծիվ-ծիվ կանեմ կըյերգեմ,	ինձ ուտելիք կըճարեմ:
բարդիների	Այսպես ազատ,
ձիգ կատարին	այսպես անդարդ
յես իմ բունը կըշինեմ:	ամբողջ որը կըճախրեմ,
Այսոր այստեղ,	այստեղ, այնտեղ,
վաղն ուրիշ տեղ,	ու աճեն տեղ
կըծըվըլամ, կըթռչեմ,	կըծըվըլամ, կըյերգեմ:

### 38. Ծաղիկներ

Դաշտի շողիկ-շաղիկներ,	գլխիկներդ որորում:
անգակ-զանգակ ծաղիկներ,	Դաշտի շողիկ-շաղիկներ,
ինչ եք նայում ինձ վրա	անգակ-զանգակ ծաղիկներ,
մուժ կապուտակ աչերով.	կուզեմ անցնել ձեր մոտով,
ձեր մտքումը եդ ի՞նչ կա,	չըտրորել ձեզ վտտով.
վոր դաշտերում որերով	բայց չեմ կարող, ինչ աբաժ,
հա՛ն գնգո՛ւմ եք, զըրնգում,	պահել իմ ձին փըրփըրած:

Ի՞նչ ծաղիկներ գիտեք:

Ի՞նչ գույնի ծաղիկներ են լինում. վորոնք:  
Ա. ո. ա. ծ. — Վարդը քաղիք, փուշը կրակիք:

### 39. Ժամանակն է

Ժամանակն է՝ արտը վարելու,  
 Ժամանակն է՝ բանջարանոցը փորելու,  
 Ժամանակն է՝ ցանելու, սերմելու, անկելու.  
 — ել ժամանակ չըկա քնելու:  
 Ժամանակն է՝ նախիրը հանդ քշելու,  
 Ժամանակն է՝ վոչխարն արոտ անելու,  
 Ժամանակն է՝ փեթակները բանալու.

— Ժամանակն անցավ տանը նստելու:  
 Ժամանակն է՝ հավերը թուխս դնելու,  
 Ժամանակն է՝ յուղ ու պանիր շինելու,  
 — Ժամանակն է՝ յեռուն գործը տանելու:  
 Ա. ո. ա. ծ. — Ով ալարի, վոչ դալարի:


### 40. Արտուտի յերգը

Քեզ եմ գովում,	Իմ ձագերը
Սլ ու ալվան	հընիս միջին,
Քո սեզանը	Ձագս ու բունս ել
Իմ ձագերին	Ծոցիդ միջին:
կեր ե տալի.	Քեզ եմ գովում,
	Ծաղիկ գարուն,
	Սլ ու ալվան
	Ծաղիկ սիրուն:

Ի՞նչ յերգեր գիտեք գարնան մասին:

### 41. Բզեզի յերգը

Մի բզեզ՝ բը՛զզզ...  
 յեկավ կպավ Աբելին ե  
 վայր ընկավ: Հավը  
 վազեց կտցելու, բայց...  
 բզեզն արդեն ողում  
 յերգում եր.  
 — Բը՛զ, բը՛զ, բը՛զբը-  
 զանե,  
 Յես բզեզն եմ տըգտը-  
 զանե,  
 Ի՞նչ եմ տվել իմ թևին,  
 վոր կուլ գնամ չալ  
 հավին:




Ինչպես ազատվեց բզեզը:

## 42. Գարնանը

Բացվել են գարնան  
որերը պայծառ.  
արի, իմ ընկեր,  
գնանք դեպի սար:

Կանչում են գարնան  
հավքերն անհամար.  
գնանք, իմ ընկեր,  
գնանք դեպի սար:

Հանելուկ.— Են ինչ ճամպորդ ե, գնում ե, գնում, չի հոգնում:  
Տարվա յեղանակները.— Գարուն, ամառ, աշուն, ձմեռ:



## 43. Գարնան դիմափորելը

(Մեր գյուղի դպրոցի որագրից)

1923 թ. մարտի 22-ին.

Մի շաբաթ առաջ մենք փորոշել եյինք դիմափորել գարնանը. այսօր առավոտ վաղ գործի անցանք: Մոսին բարձրացավ, մի դրոշակ ցցեց արագիլի բնին: Շուշիկն ու Անուշը ծաղիկներ քաղեցին, Նազիկն ու Ոսանը պսակներ հյուսեցին, Մոսին ու Տիրիկը վազեցին չոր մրգերի, վոր հյուրասիրեն սարյակներին, գարնան հյուրերին:

\*  
\*\*

Կես ժամ անց դպրոցի մուտքը զարդարված էր թարմ ճյուղերով. դռան ճակատին մի կարմիր աստղ էր կպցրած: Սարյակները ճախրում եյին յերեխաների շուրջը, կտցելով իրենց համար թափած մրգերը: Յերեխաների մի խումբը ծաղիկներ էր փնջում, մյուսը պսակներ հյուսում, մի ուրիշ տեղ գարնան յերգեր եյին յերգում: Ընկ. Տիրգրանը ջութակ էր նվագում, իսկ ընկ. Յեվգիսեն նախաճաշի մասին էր հոգում:

Շատ ուրախ անցավ գարնան տոնը:

Ինք ինչպես եք դիմափորում գարունը:

## 44. Գարուն


(Քայլերգ)

Մենք առաջ շարժվենք,  
իրար ձեռք բռնենք.  
յերգենք լա, լա, լա—  
գարուն ե ահա:

Հիմա յել ջոկ-ջոկ  
մենք շարժվենք անհոգ.  
ինչ քաղցր ե, անուշ—  
գարուն ե քնքուշ:

Սրեր վառ-վառ,  
ծաղիկներ շար-շար.  
Թռչուններ ճիթ-ճիթ,  
Չրերը շիթ-շիթ:

# Մարդն ու հողը.



հողը

անում է բույսերին



հողը

իր ծոցում հանգներ և պահում


- 1 ինչ բույսեր են ածում հողում.
- 2 ովքեր են ապրում հողի (չերկրի) վրա.
- 3 ինչ են շինում հողից.

## 46. Մայիսը

Ճամպա տվեք, ծառեր ու խոտ,  
 ճամպա բացեք մեր հյուրին.  
 Կա մայիսն և ցողոտ-շաղոտ՝  
 ամիսների թագուհին:

Ճամպա տվեք, սար ու դաշտեր,  
 ճամպա բացեք մեր հյուրին.  
 Կա բերում և ձագեր, թիթեռ,  
 Կախշուն որեր մեր յերկրին:

Խոշո՛ւ յեն բանվորները տոնում Մայիսի 1-ը:



## 47. Յերբ և լինում

Արևն և այրում,  
 խոտը չորանում,  
 ցորենը հասնում,  
 հասկերը լցնում:

Այս յերբ և լինում:

Վորո՞նք են ամուսն ամիսները:




48. Մ՛վ եւս յես

Յերբ յես գալիս եմ, թռչնիկների բներից նոր ճուտիկների ճվճվոց ե լսվում: Դաշտում, մարգագետնում, այգիներում, ամեն ինչ ծաղկում ու հասնում ե: Յերեխաները մեծ մասամբ դաշտում ու անտառում են լինում:

Մկսվում ե գյուղացու ամենագծվար աշխատանքի ժամանակը:

49. Մեղու

Պզզան, պզզան, պզպզան: պատիկ մեղու տղտղան. դաշտ ու հովիտ կրշրշես, բարձր սարեր կրթռչես. սուսան սմբուլ կրծծես ու փոաներով թավամաղ փոշի առած տուն կրգաս:



Եւ ի՞նչ ոգտակար միջատներ գիտեր:  
Առած.—Պատիկ ե ու չտիկ ե:  
Հանելուկներ.—Պուճուր կճուճ, համով ճաշ:  
Անջուր շողաց, անկրակ բողարջ:

50. Ի՞նչ անեղ արևուր

Յերկար մի մնալ սենյակում. աշխատիր բաց ողում լինել. շատ խաղան. կազդուրվիր, ուժ հավաքիր:  
Աշխատիր այգում, բանջարանոցում. շատ բան կը սովորես այնտեղ:

Սովորիր կանոնավոր վագել, ցատկել, լողալ, ծառերը բարձրանալ:

Սակայն միշտ զգուշ, վոր քեզ կամ ուրիշին վնաս չպատճառես:

Լսե՛լ եք՝ ինչ բան ե «ավագի արեվի, լողարանը» (վաննա):

Ոգտվեցեք ամուսն արևից

51. Այն ո՛վ ե

Իպրոց եմ գնում. ճանապարհին մեկը գլխարկս վայր ե գցում. յետ եմ նայում, բայց վոչ վոր չկա:

Ուզում եմ առաջ գնալ. մեկն ինձ յետ ե հրում ե գլխարկս փախցնել ե ուզում: Նայում եմ, բայց վոչ վորքի չեմ տեսնում:


Մեկը գլխիս վերևը վոռնում ե. վերև եմ նայում. ծառի ճյուղերն իրար են կաշում, կարծես թե մեկը շարժում ե, բայց շարժողը չի յերևում:

Վազում եմ, բայց շունչս կտրում ե նա. պինդ փաթաթվում ե փեշերիս, փոփոացնում շորերս:

Փոշու ամպեր ե բարձրացնում, փողոցը ավլում, թղթի կտորները ման ե ածում ողի մեջ:

Ասացեք, ո՛վ ե այս բոլորն անողը:

Իսկ ի՞նչ ոգուտ ե տալիս քամին:



### 52. Փնջիկ կովը

Փնջիկ կովիս,  
Ծաղիկ կովիս  
շատ եմ սիրում.  
դաշտից՝ կանաչ,  
աղբյուրից՝ ջուր  
յես եմ բերում:  
— Կեր, Ծաղիկս,  
կեր, կովիկս,  
կերդ անուշ.  
խմիր, Ծաղիկ,  
խմիր ջուրդ,  
խումդ անուշ:

Կեր ու խմիր,  
փր՛ո-փր՛ո կաթ տուր,  
կաթդ անուշ:  
Փր՛ո-փր՛ո կաթ տուր,  
սերն յերեսին,  
սերդ անուշ:  
Փնջիկ կովիս,  
Ծաղիկ կովիս  
շատ եմ սիրում.  
դաշտից՝ կանաչ,  
աղբյուրից՝ ջուր  
յես եմ բերում:

Իսկ ի՞նչպես են կոչվում ձիուն, խոզին, հավին:  
Ուտելիք. — Միս, կաթնամթերքներ, բանջարեղեն, շաքար-  
ածեղիք. — Ջուր, կաթ, գինի:

### 53. Միսը կարծիք

Գյուղի շուրջը, անտառներում յերևացին բազ-  
մաթիվ բվեր, վորոնք անինա վոչնչացնում էին  
մկներին ու խլուրդներին:

Վորսորդներն սկսեցին հալածել բվերին. սպա-  
նում էին և նրանց փետուրները ծախում զարդա-  
բանք սիրողների համար:


Բվերը չքացան. ել չեր լավում նրանց ճիչն ու  
վայոցը. բայց դրա փոխարեն ավելացան մկները ու  
ելի սկսեցին արտերն ավերել:

Գյուղացիք գլխի ընկան, վոր «փետրավոր կա-  
տուններն» իրենց բարեկամներն են, արգելեցին վոր-  
սորդներին հալածել բվերին և համբերությամբ լը-  
սում էին նրանց ճչերն ու վայոցը:

Ինչո՞ւ ըստ գիշերն ե վորսի դուրս գալիս:

Վայրենի թռչուններ. — Բու, հուլոպ, ծիա, լոր:

Գիշատիչ թռչուններ. — Ազոավ, բադե, արծիվ:



54. Լճուճ

Լուսնյակ գիշեր,  
 լիճը խաղաղ,  
 ուռած թշեր,  
 գորտերի խաղ,  
 ճամպի վրա  
 ջրի մեջը,  
 Ե, ով գիտե  
 շատն ու քիչը, —  
 հանաք մանաք,  
 գորտի բանակ,  
 գորտի ժամառուն,  
 գորտի նվագ,  
 սրախոսում,  
 դրախոսում,  
 բեռու վրա  
 եսպես ասում.



- Բեռին մեռել ա,  
 բեռին մեռել ա...
- Յերբ, յերբ, յերբ, յերբ:
- Մեկեկել որը, մեկեկել որը...
- Ըզորդ, ըզորդ, ըզորդ:
- Կորդ, կորդ, կորդ:
- Մըկըկա-մըկըկա, մեռել ա.  
 կանչենք տատը խին լա:  
 ըկացավ,
- չուստերն հագավ վեր կացավ.  
 ճամպի ծերին՝ թ փ, թըփ, թըփ.  
 գիծ թոռները ջր՝, ջրփ, ջրփ,  
 տոտիկ-վոտիկ շոեցին,  
 գետը ջրնկած լոեցին:

Ի՞նչ ոգուտ են տալիս գորտերը:

Ա. ա. ծ. — Ելին հարսանիք կանչեցին, ասավ. «Կամ շուրն ե  
 պակաս կամ փայտը»:  
 Զրեբ. — Լիճ, գետ, ծով, արու:



55. Անտր գյուղում

Առաջին անգամ եր Լեռնիկը գյուղ յեկել այս  
 ամառ: Չանձրանում եր, չեր իմանում՝ ինչ անի:  
 Շարունակ կարգալ չեր լինում, ընկերներ չուներ,  
 վոր խաղար, քամի չկար, վոր փռուանք բաց թողներ:  
 Անցավ մի շաբաթ. Լեռնիկն ել չեր ձանձրա-  
 նում. — այնքան գործ ուներ: Գյուղում նոր ըն-  
 կերներ ե ճարել. մեկ տեսնում ես նրան այգում,  
 ծառի ճյուղերի վրա նստած որորվում ե կամ պը-  
 տուղներ հավաքում. մեկ՝ անտառում պաղ աղ-  
 բյուրների ջրերով ե զվարճանում. գետափին՝ ձուկ  
 ե վորսում կամ լողանում. մեկ ել ընկերների հետ  
 բանջարանոցում յեռանդուն կերպով քանդում ե,  
 փորփրում, առուններ փորում, շորացած տունկերը  
 ջրում...

Դու ի՞նչ ես արել ամառը գյուղում, քաղաքում:  
 Հանելուկ. — Թոկին շուր տամ, հորթն ուռչի:

56. Համառարիւմ ընկեր

1.

Յերեխաները շրջապատեցին հորեղբորը և խընդրեցին մի բան պատմել:

—Լավ, դե լսեցեք:

Յերբ յես յերեխա եյի, խնդրեցի մայրիկիս, վոր թույլ տա Ափուլի հետ գնամ գետի ափը խաղալու: Նա թույլ տվեց:

—Ո՛վ եր Ափուն, հորեղբայր,—հարցրեց Վահանը:

—Նա մեր տան բարեկամն եր և իմ խաղընկերը: Յես և Ափուն գնացինք գետի ափը. յես ջրի յերեսը մի տախտակ գցեցի. տախտակն այս ու այն կողմն եր գնում, մենք նայում եյինք և ուրախանում:

2.

Քիչ հետո տախտակը շատ հեռացավ ափից, ձեռքիս փայտով չեյի կարողանում տախտակը յետքաշել:

Ափուլին ասացի, վոր ջուրը մտնի և տախտակը դուրս քաշի:

Ափուն չկատարեց իմ ցանկութունը, իսկ յերբ նրա վրա բարկացա, թողեց փախավ: Յես ել մի քար վերցրի և գցեցի Ափուլի յետևից:

—Վայ, հորեղբայր, այդ ի՞նչ արիր,—գոռայ Վահանը:

—Ափուն ծպաց և ընկավ գետնի վրա. յես ոգնության չգնացի, մտա գետը, վոր տախտակը հա-

նեմ: Չուրը խորն եր, ընկա ամենախոր տեղը, քիչ եր մտում, խեղդվեյի. սկսեցի ոգնության կանչել հորս, յեղբորս, Ափուլին... Հանկարծ զգացի, վոր մեկը քսվում ե ինձ: Յես փաթաթվեցի, և նա լողալով ինձ դուրս հանեց ջրից: Յես նայեցի... Ափուն եր:

—Ա՛, ի՞նչ լավն ե յեղել քո ընկեր Ափուն:

—Դու ի՞նչ ասացիր նրան, հորեղբայր,—հարցրեց Լուսիկը:



—Յես ձեռքս գցեցի նրա վզովը, լաց յեղա և ներողություն խնդրեցի:

—Իսկ նա ինչ ասաց,—հարցրեց Վահանը:

—Նա հա՛ֆ, հա՛ֆ արավ:

—Դե ճիշտ ասա, հորեղբայր, ո՞վ եր քո ընկերը, Ափուն:

—Նա մի շուն եր, մի հավատարիմ, մի քաջ շուն:

Որի՞չ ի՞նչ ծառայություններ են անում շները մարդկանց:

Ի՞նչ պատմություններ գիտեք շների մասին:

## 57. Մեր որագրից

(Սմառ)

Սմառը մեր ընկերներից շատերը ցրվել յեին՝ վորը դաշտումն էր աշխատում, վորը հոտաղ էր գնում, վորն էլ ծնողների հետ ուրիշ տեղ էր գնացել:

Մենք առաջվա պես բոլորս միասին շեյինք հավաքվում դպրոցում. բայց առաջուց վորոշել էյինք հինգշաբթի և կիրակի որերը միասին լինել. այդ որերը վարժուհին գալիս սպասում էր դպրոցում, հավաքվում էյինք ու գնում դաշտ, անտառ կամ գետափ: Կարգում էյինք, խաղում, կոլլեկցիաներ էյինք հավաքում, լողանում էյինք, յերբեմն էլ հանդեսներ էյինք կազմում, պարում, յերգում:

Այս սմառ մեր խումբը հիշյալ աշխատանքներն է կատարել.

1. Վարժուհին կարգացել է յերեք գիրք.
2. Պատմել ենք յոթը հեքյաթ ու պատմվածք.
3. Հինգ որ աշխատել ենք մեր ընկերների մոտ աշտում, բանջարանոցում, այգում.
4. Մի որով եքսկուրսիա յենք գնացել մոտիկ գյուղը.
5. Սմեն կիրակի պատկոմական պարասմունքներ ենք ունեցել.
6. Իպրոցի պարտեզումն էլ ենք աշխատել. ծաղիկներն ենք խնամել.
7. Իպրոցի հավերին թուխս ենք գրել. քսան ճուռ են հանել.
8. Յերեք հանգես ենք ունեցել, մեկը՝ մեծերի համար.
9. Մաքրել ենք դպրոցի շենքը աշնան պարասմունքների համար.
10. Միքանի ընկերներ կոլլեկցիաներ են կազմել ու գրել թանգարանում. ամենից հաջող են՝ «Մեր գետի ձկները», «Գորտը», «Շունը մարդու բարեկամն է» և «Հացը» կոլլեկցիաները:

Պատմեցեք՝ գո՞ւք ինչ էք արել սմառը՝ հունիսին, հուլիսին, ոգոստոսին:



59. Չորս յեղանակ

Թե դարուն ե նաշ-նախշուն,  
նա քնչեր ե մեզ բաշխում:

— Ծիլ ու ծաղիկ, կանաչ խոտ,  
ալ ու ալվան վարդ շաղոտ:

Թե ամառ ե, շոգ ամառ,  
քնչ ե բերում մեզ համար:

— Յորեն, գարի ու հաճար,  
ամեն հոգսի դեղ ու ճար:

Թե աշուն ե պտղաբեր,

քնչ ե բերում մեզ նվեր:

— Նուռ, սերկևիլ, տանձ, խնձոր,  
դեղձ ու խաղող մեղրածոր:

Թե ձմեռ ե ցրտաշունչ,

քնչ ե թափում լուռ ու մունջ:

— Փաթիլ-փաթիլ փափուկ ձյուն՝  
արծաթի պես պսպղուն:

Ամիսներ. — Հունվար, Փետրվար, Մարտ, Ապրիլ, Մայիս, Հունիս,  
Հուլիս, Ոգոստոս, Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր,  
Դեկտեմբեր:

60. Կողպերն ու բանալին

Կողպերն ասավ.

— Յես ուժեղ եմ. վոչ վոքի առաջ դուռը բաց չեմ անի.

— Իսկ յես կը բանամ, — պատասխանեց բանալին, մտավ  
կողպերի մեջ, շուռ յեկավ ու բաց արեց դուռը:  
Բանալին կողպերից ուժեղ եր:

Ի՞նչի յեն պետք առանձին-առանձին բանալին յեվ կող-  
պերը:

Ո՞վ ե յեփում թոնրի հացը,

Ո՞վ ե կտրում մանկան լացը,

Ո՞վ ե պահում գյուղի հոտը,

Ո՞վ ե քաղում դաշտի խոտը:

61. Ծիծեռնակ

Ծիծեռնակը բուն եր շինում,  
և շինում եր և յերգում.

ամեն մի շյուղ կպցնելիս  
առաջվա բունն եր հիշում:


Մեկ անգամ եր նա բուն շինել  
և շատ անգամ կարկատել.

բայց այս անգամ վերադարձին  
բունն ավերակ եր գտել:

Այժմ նորից բուն ե շինում,  
և շինում ե և յերգում.

ամեն մի շյուղ կպցնելիս  
առաջվա բունն ե հիշում:

Առած. — Քիչ բարձիր, շուտ դարձիր:



62. Միասին

Ձուր չեր Աշխենը ամբողջ յերեք ամիս հավաքում լուցկու և ծխախոտի տուփերը, խցաններ, կոճեր, գունավոր թղթեր ու կտորներ, յերկաթե թելեր և հազար ու մի մանր-մուկ իրեր:

Նրան ոգնում էյին այդ բանում հայրը, յեղբայրները, քույրը և ընկերներից շատերը:

Վերջապես մի որ նրանք վորոշեցին մի գյուղ շինել:

Հավաքվեցին ընկերներն ու սկսեցին յեռանդով աշխատել:



Ռուբիկը ցուցմունքներ էր տալիս, իսկ Աշխենը նյութերն էր դասավորում:

Տները շինեցին տուփերից, կողբերին զոներ ու լուսամուտներ բացին, ապակիների փոխարեն կրպցրին բարակ գունավոր թղթեր, իսկ ծխնելույզները շինեցին կոճերից: Ձողիկներից սայլեր ու սահնակներ շինեցին, անիվները կտրատեցին խցաններից:

Ծառերը տաշեցին փայտիկներից, այնպես վոր տաշեղները վրան մնացին:

Տեղ-տեղ փռեցին բամբակի շերտեր. ձմեռում ուտ էր:

Յե՛վ յերբ յերեկոյան մոմի կտորներ վառեցին խրճիթների մեջ, շատ գեղեցիկ էր յերևում «գյուղը գիշերով»:



63. Ո՞ւր և աշխատեցնում վարդը

Կամը քաշում են յեղները.

Կողովները բեռնում են եշերին.

Պարկերը տանում են ուղտերը.

Մայլին լծում են գոմեշ.

Ֆուրգոնը քաշում են ձիերը.

Կառքը քաշում են շորիները.

Սահնակին շներ էլ են լրծում:

64. Ի՞նչպես և փոխադրվում վարդը

Ո՞վ է տեսել գնացք, ավտոմոբիլ, ոդանավ.

Ո՞վ է գնացք նստել.

Վո՞րն է ամենից արագաշարժ.

Վո՞րն է ամենից շատ բեռ տանում:

65. Աշխատանք

Մենք, յերեխեք, որերով մեջքով աղյուս կրեցինք- մեր կոշտացած ձեռքերով պատ ու պատնեշ շարեցինք:

Մենք ել կացնով, յերեխեք, ձող ու գերան կրաբեցինք ու ձեզ համար ապահով խրճիթ ու տուն շինեցինք:

Մենք ել դաշտը արորով ակնս-ակնս վարեցինք, վոսկի ցորեն ու գարի բուռը-բուռը ցանեցինք:

Ի՞նչ կասեր դարբինը, նավաստին, զինվորը:

Արհեստավորներ.— Հյուսն, դարբին, դերձակ, կոշակար:

Բանվորներ.— Մետաղագործ, փայտահատ, վորմադիր, ձկնապան:

66. Կար ու ձեռքի արհեստանոցում

(Եքսկուրսիա)

Մեր խմբում կա մի աղջիկ՝ Մարիաննա. նրա մայրն աշխատում է կար ու ձեռք արհեստանոցում: Նա ասել էր, վոր մենք, յեթե ուզում ենք, կարող ենք այցելել արհեստանոց: Մենք ուրախությամբ համաձայնվեցինք և սկսեցինք մեր եքսկուրսիայի ծրագիրը կազմել:

1. Շատ մարդ է աշխատում արհեստանոցում:

2. Կան այնտեղ յերեխաներ, քանի՞ հոգի յեն:

3. Որական քանի՞ ժամ են աշխատում մեծերն ու փոքրերը:

4. Ի՞նչպես է արհեստանոցի շենքը:

5. Ի՞նչ գործիքներ ու մեքենաներ կան:

6. Ի՞նչով է տարբերվում արհեստանոցը դերձակի խանութից:

Գնացինք արհեստանոց. մեզ սիրով ընդունեցին և ներս տարան. մի մեծ շենք էր, յերկու հարկանի, 10—11 սենյակներով:

Մի մեծ սենյակում թղթից ու կարտոնից ձևեր էյին կտրում:

Մյուս սենյակում ամեն տեսակի կտորներից շորեր էյին ձևում:

Չարմանալի բան. այստեղ շորերը ձևում են տասր, քսանը միանգամից. դարսում են իրար վրա կտորները և մի առանձին տեսակի մկրատով կտրում են միանգամից՝ կավիճի գծերի վրայով:

Յերրորդ և չորրորդ սենյակներում կար էյին անում. տասնյակ մեքենաներ արագ-արագ բանում էյին. վորը թևեր էր կարում, վորը միայն գրպաններ, գոտիներ, ոճիքներ և այլն:

Մյուս սենյակներում պատրաստի շորերը հարթուկում էյին, կոճակները կարում ու կախ էյին տալիս:

Այսպիսի հարթուկներ չէյինք տեսել դեռ. շոգիով են տաքացնում. սեղմում են կոճակը—և հարթուկն արդեն տաքացել է. իսկ մեր տանը ինչքան են շարշարվում հարթուկը տաքացնելու համար:

Մենք նոր միայն հասկացանք, թե ինչպես են մեծ քանակությամբ շորեր պատրաստում արհեստանոցներում:

Մի գրքում նշանակեցին մեր այցելությունը, և կառավարիչը մեր թանգարանին նվիրեց բոլոր կտորտանքներից՝ «Ինչ են հագնում մարդիկ» կոլեկցիայի համար:

Հանելուկ.— Վտար սեղմես—բերանը կբանաս

67. Փոքրիկ ձկնորսը

Ներսիկը ուզում էր ձուկ բռնել: Նա վերցրեց ասեղը, շիկացրեց մոմի բոցի վրա, ապա ծռեց, ծայրից թել կապեց, բարդուց մի յերկար ճիպոտ կտրեց, թելը կապեց ճիպոտի ծայրին. այգու պատի տակից վորդեր հանեց ու մի դույլ վերցնելով գնաց գետափ:

Սցանը մոռացել էր: Ներսիկը ծառի փտած կեղևի մի կտոր կապեց խցանի տեղ, կարթը կախեց ջուրն ու սպասում էր: Չուկը կտցում էր, բաշում, բայց չէր բռնում:

Ներսիկը վերջապես մի փոքրիկ ձուկ բռնեց և ուրախ-ուրախ տուն վազեց:

Մյուս կիրակին նա նորից յեկավ ձուկ բռնելու: Այս անգամ հայրիկը տվել էր իսկական կեռ՝ սուր փշերով: Ներսիկի վորսը ավելի հաջող էր, ու դույլի մեջ վխտացող ձկները նա հպարտ-հպարտ տուն տարավ:

Ել ինչով են ծուկ բռնում:

Փորձեցեք ապակի ամանում ձկնիկներ պահել:

Հարցրեք՝ ինչպես պետք է խնամել նրանց—կերակրել, ջուրը փոխել և այլն:

Առած.— Չուկը յերբ ել բռնես— թարմ կըլինի:

68. Մաճկաչը

Պինգ բռնած արորի մաճը, գյուղացին վարում է արար ու հորովել է տալիս.

«Յճա ծագեց կարմիր արև,  
տաք ու պայծառ է որը.  
դե, քաշեցեք, սիրուն յեզներ,  
տաշ տարեք արորը»:

Շարժվում են յեզները. խոփը ձևում է գետինը ու յետևից խոր աղոսներ թողնում: Փնշում են յեզները, գյուղացու դեմ քիցքրտինք է կաթում, բայց նրանք վարում են ու վարում:

Կեսորին միայն գյուղացին դադարեցնում է վարը, ճաշում է ինքը, ուտում են յեզները, պառկում հանգրստանում, վոր նորից— նոր ուժով սկսեն իրենց վարը:

Ժամանակը շատ թանգ է, որը խիստ կարճ է թվում:


Արի, գուլթան, վարի, գուլթան, որն յեկել է ճաշ դառել.

տոր շուռ տուր, խոփիդ դուրբան...

հորովել... հորովել...

Առածներ.— Ամառվա փուշը, ձմեռվա նուշը:

Հացը գցած—բանն անիծած:



69. Խոսնակ քոչուեր

Քոչուեր խոսնակ	Ու թևին տալով
Բնիկ ե հյուսում,	Նա դաշտ ե թռչում,
Ծղնոտ կրելով	Դաշտերի վրա
Իր յերգն ե ասում:	Իր յերգը կանչում:
Ապրում ե այսպես,	Ու ժիր մաճկալը
Ազատ իր կամքին.	Հսելով յերգչին,
Չարթնում ե կանուխ	Ինքն ել ե յերգում
Լուսաշող ծեղին:	Հենված իր մաճին:

Վո՞ր թռչուններն են յերգող: Վո՞ր թռչուններին ենք ձայնից նանաչում:

70. Լուսատուների վեճը

Լուսինն ասավ.

„Յեթե ամպերը չխանգարեն, յես ամբողջ աշխարհին լույս կը տամ“:

Ճրագն ասավ.

„Մենակ անպիտան քամուց եմ վախենում“:

Կամպն ասավ.

„Վոչ մեկդ ել պետք չեք գալ սենյակում— աշխատելու, գրել-կարդալու համար. միայն թե նավթ տան ինձ շարունակ“:

Մոմն ուզում եր ասել, վոր ինքը բոլորից ավելի պետք կը գա թե սենյակում, թե գոմում և թե փողոցում, բայց այդ ժամանակ զղրղաց մեքենան և ելեքտրական լամպերը առատ լուսավորեցին փողոցն ու շենքերի բոլոր անկյունները:

Մամը փլփլաց, ճրագը ծխաց, լամպը գայրույթից տրաքացրեց ապակին, իսկ լուսինը՝ հո վաղուց մտել եր ամպերի տակ:

Առած.— Ճրագի առաջ շահմանի չեն խփի:  
Հանելուկներ.— Պոչը ջրում, գլուխը կրակում:  
Բուսեմ— բոնովս մեկ, թողնեմ— անովս մեկ:

71. Հրածինի պատմությունը

Հրածինը ուզում եր պատմություն գրել. շատ մտածեց, բայց չեր իմանում ինչի մասին գրի. սկսեց վերնագրերը մտածել. «Խելոք աշակերտ», «Փողոցի յերեխան», «Հեղեղը»— ու ելի միքանի բաներ, բայց բոլորն ել ջնջեց. չեր հաջողում: Հանկարծ նա տեսավ անձրև ե գալիս. սկսեց անձրևի մասին գրել. «Մուժ ու սև ամպերը ծածկել են յերկիրը. ջրերը վազում են»... Մեկ ել վերև նայեց, տեսավ ամպերը չքացել են, և արևը ուրախ ժպտում ե:

— Ձեզավ, — մտածեց Հրածինը ու գրիչը ցած գրեց. բայց ելի գրել եր ուզում:

Ծիտը կանգնած պատուհանի փեղկին՝ խաղում եր արևի տակ, թևերն եր մաքրում կտուցով:

— Այ, հիմա կը գրեմ, — ու հրածինը վորոշեց անպատճառ գրել. «Ծիտը, նստած իմ պատուհանին»...

Մինչ այս, մինչ այն — ծիտը թռավ:

Հրածինը բարկացավ. ուզեց շարտել գրիչը, բայց չե, նա ուրիշ բան մտածեց. շուռ յեկավ նստեց սեղանի մյուս կողմը, պատուհանի դիմաց ու սկսեց դիտել իր շուրջը:

— Ինչքան բան կա սենյակում, իսկ յես իզուր տեղը ինձնից բաներ եմ հնարում, — ասաց նա ինքնիրեն:

Ու գրեց. «Մեր սենյակը մեծ չե. հայրիկս մեծ սենյակ ե ուզում, ասում են՝ սպասիր այս ձմեռ, գարնանը՝ կը տանք: Ծիշտ ե, փոքր սենյակն ել վատ չե. շուտ ե տաքանում. բայց յերբ ընկերներս գալիս են, տեղ չի լինում ազատ խաղալու. մայրիկս ել ե դժգոհում. ասում ե՝ ինչքան մաքրես, ելի թափթփված, նեղվածք ե...»

Յես շատ կուզեյի, վոր մեր նոր բնակարանը մի մեծ պատշգամբ կամ պարտեզ ունենար. յես ինքս կը մաքրեյի, կոգնեյի մայրիկիս. հիմա յեյ յես ոգնում եմ. կրակ եմ անում, հարթուկում եմ, թեյ եմ տալիս՝ հավաքում...»

Այդ ժամանակ տուն յեկավ հայրիկը. Հրածինը կարգաց իր պատմությունը, հայրիկը շատ հավանեց ու ասաց.

— Ապրես, աղջիկս, շարունակիր, միայն մի շտապի ու գեղեցիկ գրի:


72. Չաղաց

Յերեք-չորս հաս  
 չաղացաբար  
 պտըտվում են,  
 հա պտըտվում...  
 դուրսը, ներսը  
 հարա-հրոց,  
 սայլի ճռինչ,  
 քարի գրոռոց:  
 Մինը բեռը  
 ներս ե կրրում,  
 մինը նրան  
 դուրս ե բերում:

Քնաթաթախ  
 շողացպանը  
 ալրաթաթախ՝  
 ալրատանը  
 քարը տեղից  
 իջեցրած,  
 նրա տակը  
 վերև դարձրած,  
 հա տալիս ե  
 քարին մուրճը  
 ու կայծեր ե  
 թափում շուրջը:

Ի՞նչ ոգուտ ե տալիս շողացպանի աշխատանքը:

Հանելուկ.—Սոված չի՛ հաց ե ուզում. ծարավ չի՛ շուր ե ուզում:



Պատմեցեք բովանդակությունը:

73. Ճնճողուկն ու դեղձանիկները

—Ծիփ, ծիփ, ճիփ, ճիփ... ճնճողուկ եր, վանդակ  
 չտեսած ճնճողուկ:

Վանդակ եր ձողի ծայրին ու նայում եր վան-

դակին: Յերկու թռչուն կային այնտեղ. դեղձանիկ-  
 ներ եյին նրանք:

Ինչպես կծկվել, կպել եյին իրար... կերակուր  
 ել ունեյին:

—Ծիփ, ծիփ, ծիփ,—ճնճողուկն յեկավ նստեց  
 վանդակի վրա:

—Բարև, սիրուն թռչնիկներ, ինչո՞ւ յեք կծկվել:  
 Այդ ի՞նչ լավ կուտ ունեք...

Դեղձանիկները վեր նայեցին:

—Մենք կուշտ ենք, կուզես՝ յեկ դու յել կեր:

—Շնորհակալ եմ,—ծիծաղեց ճնճողուկը,—յեր-  
 բեք չեյի ցանկանա վանդակ մտնել կտի համար:

74. Մեր դպրոցը

Մեր դպրոցը մի սպիտակ շենք ե. ունի ընդամե-  
 նը 5 սենյակ. 3-ը դասարաններ, մեկը թանգարան-  
 գրադարան, մեկը արհեստանոց: Խոհանոցն ու մա-  
 ոանը (պահեստը) բակի փոքրիկ շենքումն են:  
 Բակում շատ ծառեր կան. մի կողմն ել՝ մեր մար-  
 գերն են. այդտեղ թե խաղում ենք, թե աշխատում:

Վերջին խմբում կան պատկոմներ: Նրանք կարճ  
 շորեր են հագնում, վզներին ել կարմիր փողկապ-  
 ներ կան: Յերբ ողակապետը կանչում ե՝ «Պատ-  
 կոմներ, պատրաստ»,—նրանք միաձայն պատա-  
 խանում են:

ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍԵՆՔ

Նրանք շատ անգամ դասերից հետո ժողովի յեն  
 մտում: Հետո խաղում են, մարզանքներ են անում,  
 կարդում են: Զրույցներ ել են ունենում: Պատկոմ-

ներն ասում են, վոր «նրանք պատրաստվում են ապագա աշխատանքի ու պայքարի համար»:

Մենք ել շատ ենք ուզում պատկոմ դառնալ բայց չեն ընդունում.— ասում են՝ դեռ փոքր եք:

### Պատկոմական սովորույթներ

1. Պատկոմը շուտ է ընում ու շուտ վեր կենում.
2. Պատկոմը մաքրասեր է ու կարգապահ.
3. Պատկոմը սիրում է ջուրը, արևը, մաքուր ողբ.
4. Պատկոմը չի ծխում, չի հայհոյում, չի խմում.
5. Պատկոմներն աշխատում են միացած ուժերով:

### 75. Ծիտիկների հարսանիքը

Ծիտիկները հարսնիք ունին  
— ճզր-վզր, ճզր-վզր...  
ինչ դժոց է կաղնի ծառին,  
այգու պատին, կտրան ծերին,  
տասը, քսան, հարյուր, հազար—  
պար են գալիս, ել քանի պար:  
Հարսն ասավ.

— Թմփլիկ ծիտիկ, ի՞նչ ես բերել:

— Մի հատ հաճար:

— Բմբլիկ ծիտիկ, ի՞նչ ես բերել:

— Կանաչ բանջար:

— Բա դ՞նւ, Պատիկ:

— Չիր ու չամիչ:

— Բա դ՞նւ, Չստիկ:

— Կորեկ մի քիչ:

— Բա դ՞նւ, Պատիկ սիրուն ծիտիկ:

— Յէս, մոռացա... բան չբերի:

«Թր՛ու, դե թուչենք՝ ելի բերենք»:

### 76. Արջն ու մեղուները.

Արջն ասավ մեղվին.

— Ի՞նչ ես տրդարդում շարունակ. արածդ ել մի բան լինի. ամբողջ որը շափչփում ես սար ու ձոր ու միբիչ փոշի առած փեթակ ես դառնում:

Մեղուն ասավ.

— Մենք հազարներ ենք. մեր բերած փոշին վոր հավաքենք, դեղեր կըդնենք:

Արջն ասավ.

— Ինչի՞ յեն պետք ձեր դեղերը, ամեն մեկդ մի կաթիլ մեղր եք շինում, են ել ինքներդ եք ուտում:

— Հարցրու մարդուն, — ասավ մեղուն. — նա մեզ բոլոր կենդանիներից շատ է սիրում: Մեր փեթակը միշտ լիքն է բաղցր մեղրով:

«Մա չի իմանում, վոր յես ել եմ սիրում եղանիծած մեղրը» — մտածեց արջն ու հարցրեց, — Հավատալս՞ չի դալիս. կարելի՞ յե գալ տեսնել ձեր հարուստ փեթակը:



— Ինչո՞ւ չե, միայն քեզ խելոք պահես:

Արջը որորալով գնաց փեթակի մոտ, բայց հենց վոր ներս նայեց, բերնի ջուրը գնաց. նա թաթը կոխեց, վոր մեղր հանի, բայց փոքրիկ մեղուները միացած հարձակվեցին ու են սրբ գոցին նրան, վոր արջը դրանից հետո սարսափում եր փեթակին մոտենալ:

«Ձե, ախպեր, սրանք փոքր են, բայց միացած են. զրժվար է սրանց դեմ դնալը».— մտածում եր արջը:

Իսկ մարդուն յե՞րբ է կծում մեղուն:

Ինչպես են մարդիկ պաշտպանվում մեղուներից:

Առած. — Մեղր ծախողը մատը կտիզի:

## 77. Մանկական Ինտերնացիոնալ

Յերգով շարժվենք մենք մանուկներս—  
գնանք մեր տունը մանկական.  
Թռչնի յերգի պես տարածվեն թող  
յերգերը մեր— թող թռավրան:


Ահա շողում ե արեգակը,  
այգում փրփել են կանաչներ.  
Թռչունն իր յերգը ըսկըսել է.  
ցողով ծածկվել են տերևներ:

Մեզ մարդիկ կըսիրեն միշտ,  
կըհանձնեն աշխատանք—  
շտապենք մենք մանկասունը,  
շտապենք, շտապենք առաջ:

Մեր թույլ փոքրերը միշտ բայում են,  
մանուկ սրտեր ենք մենք կըրում.  
դեպի ուսումն ու գիտությունը  
գնում կամքով մեր ընդհանուր:

Յե՛վ հենց մանուկ տարիներինց դեռ  
կըլնենք հասուն, առողջ մարդիկ—  
պիտի կյանքներըս նըվիրենք մենք  
ստեղծագործող աշխատանքին:

Մեզ մարդիկ կըսիրեն միշտ,  
կըհանձնեն աշխատանք,—  
շտապենք մենք, մանուկներըս  
շտապենք, շտապենք, արագ:



## 78. Մոված գայլը

1.

Մոված գայլը դես ընկավ, դեն ընկավ, հոտից հեռա-  
ցած մի փոշխար տեսավ ու ասաց.

— Այ փոշխար, քեզ պետք է ուտեմ:

— Ուտում ես՝ կեր,— ասաց փոշխարը,— բայց չես կըշ-  
տանալ... միայն կաշիս ու վոսկորս է մնացել: Յեղբայրս  
գեր է. սպասիր վաղեմ յեղբորս կանչեմ, նրան կեր:

— Շատ լավ,— համաձայնեց գայլը:

Վոշխարը մայելով առաջ վաղեց, հասավ հոտին ու ել  
յետ չեկավ:

2.

Մոված գայլը դես ընկավ, դեն ընկավ, տեսավ մի ձի  
դաշտում արածելիս, ու ասաց.

— Այ ձի, քեզ պետք է ուտեմ:

— Ուտում ես՝ կեր,— ասաց ձին,— բայց մեղք ես, պայ-  
տերս հանիր, փոր ուտելիս չխեղդվես:

— Շատ լավ,— համաձայնեց գայլը:

Ձին յետևի փոտը բարձրացրեց:

Գայլը մոտեցավ, փոր պայտի մեխերը հանի: Ձին այն-  
պես քացի հասցրեց, փոր գայլի աչքերը մթնեցին, ու կող-  
կոնձելով վայր ընկավ:

3.

Մոված գայլը փոռնալով վեր կացավ, դես ընկավ, դեն  
ընկավ, գյուղից դուրս մի եղ տեսավ ու ասաց.

— Այ եղ, քեզ հո պետք է ուտեմ ու ուտեմ:

— Ուտում ես՝ կեր,— ասաց եղը,— բայց թող փոր մեռ-  
նելուց առաջ մի լավ գում, հետո կեր:

— Շատ լավ,— համաձայնեց գայլը:

Եղը սկսեց գոալ, գայլն ել առաջը պղպել եր և ուրա-  
խությունից փոռնում եր:

Գյուղի շները լսեցին, դուրս թափվեցին: Գայլը հազիվ  
փախավ, ազատվեց ու իրան պցեց իր բունը:

4.

Գայլը բնում կծկվեց ու այսպես խոսեց.

— Տո՛ւ, դու միս մորթող եյի՛ր, փոր նիհարն ու գերն  
եյի՛ր ջոկում:

— Տն, դու պայտան էյիր, վոր ձիու պայտերն էյիր քաշում:

— Տն, դու աշնղ էյիր, վոր եշի հետ խաղ էյիր ասում:

— Ախ, յերանի այտեղ մեկը լիներ, պոչիցս բռներ, տուր թե կրտաս մեջքիդ, կողքերիդ, մին, յերկու, մին, յերկու...

Անձրե եր յեկել, նախրապանի տղան մտել եր գայլի բունը: Լսեց գայլի խոսքերը, պոչից բռնեց ու տուր թե կրտաս:

Գայլը մի կերպ ազատում ե պոչը, փախչում ու ասում:

— Մարդ իր տանն ել չկարենա հանգիստ ինքն իրեն զրույց անել. բա եսպես ել աշխարհ կըլինի:

# Ց Ա Ն Կ

(Աստղանիշները \* չափածո յեն)

I Յ Ե Բ Ե Խ Ա Ն

*1. Անուշ մայրիկը «Մեր գպրոցից» . . . . .	3
*2. Տիկնիկ (յերգ) «Դպր. յերգերից» . . . . .	3
*3. Ճուտիկ Ս. Բ. Խնկոյան . . . . .	4
4. Ինչն ե լավը «Մեր գպրոցից» . . . . .	4
5. Մուկիկը . . . . .	5
*6. Հովիվը (յերգ) Ղ. Ա. Պալան . . . . .	6
7. Փոքրիկ նկարիչը փոխ. Մ. Հյուսն . . . . .	6
8. Ո՞վ ե բացակայում ըստ Յեթմոնովյի . . . . .	7
9. Թիթեռնիկի թևերը Մ. Հյուսնյան . . . . .	8
10. Աղջիկն ու տիկնիկը Ս. Յեթմոնովյի . . . . .	10
11. Ծիտիկն ու մուկիկը Հ. Թումանյան . . . . .	10
*12. Փիտիկի գանգառը Հ. Թումանյան . . . . .	11
13. Ժամացույցի լիզուն Մ. Հյուսն . . . . .	12
14. Շուրայի նամակը Սվետիցկայա . . . . .	13
15. Չեղավ «Հասկերից» . . . . .	15
16. Մեր ընկերները Մ. Հյուսնյան . . . . .	15

II Բ Ն Ո Ի Թ Յ Ո Ի Ն

*17. Յերբ ե լինում (Աշուն) «Մեր գպրոցից» . . . . .	17
*18. Աշուն (յերգ) «Դպր. յերգերից» . . . . .	18
19. Ո՞վ եմ յես Մ. Հ. . . . .	18
*20. Յեղևին Ս. Բ. Խնկոյան . . . . .	19
*21. Գորան ու ագռավը Ս. Բ. Խնկոյան . . . . .	19
22. Պատրաստվեցեք Մ. Հ. . . . .	20
23. Ոգուտ ե քնաս Մ. Հ. . . . .	21
24. Մարդն ու ջուրը Մ. Հ. . . . .	22
*25. Յերբ ե լինում (Ձմեռ) «Մեր գպրոցից» . . . . .	22
26. Ծափ գուլպաները «Լուսաբերից» . . . . .	23
*27. Առաջին ձյունը «Լուսաբերից» . . . . .	23
28. Ամեն մեկն իր գործն ունի Մ. Հ. . . . .	24
*29. Ձմեռ պապի (յերգ) «Դպր. յերգերից» . . . . .	25
30. Մարդն ու կրակը Մ. Հ. . . . .	26
31. Շարժվող տունը Մ. Հ. . . . .	27
*32. Յերբ ե լինում (Գարուն) «Մեր Դպրոցից» . . . . .	27
33. Արագիլները (յերգով) «Լուսաբերից» . . . . .	28
*34. Չնձաղիկ (յերգ) Հ. Ս. Պալան . . . . .	28
35. Պահապաններ փոխ. Մ. Հ. . . . .	29
36. Բնության որացույց Ս. Յեթմոնովյի . . . . .	30
*37. Ծիտիկի յերգը աշ. Բունիաթյան . . . . .	30
*38. Ծաղիկներ (յերգ) փոխ. Ս. Բ. Խնկոյան . . . . .	30
39. Ժամանակն ե Մ. Հ. . . . .	31
*40. Արտուտի յերգը (յերգ) «Դպր. յերգերից» . . . . .	31
*41. Բզեզի յերգը Ս. Բ. Խնկոյան . . . . .	32
*42. Գարնանը Հովհ. Թումանյան . . . . .	32
43. Գարնան դիմավորելը Մ. Հ. . . . .	33
*44. Գարուն (քայլերգ) . . . . .	34
45. Մարդն ու հողը Մ. Հ. . . . .	35
*46. Մայիսը Հ. Հայրապետյան . . . . .	35
*47. Յերբ ե լինում (Ամառ) «Մեր գպրոցից» . . . . .	36
48. Ո՞վ եմ յես Մ. Հ. . . . .	36



*49. Մեղու (յերգ) «Գար. յերգերից» . . . . .	36
50. Ի՞նչ անել ամառը . . . . .	36
51. Այն ո՞վ է Մ. Հ. . . . .	37
52. Փնջիկ կոլը Ս. Բ. Խնկոյան . . . . .	38
*53. Միայն կարծիք փոխ. Մ. Հ. . . . .	38
54. Լճում փոխ. Ս. Բ. Խնկոյան . . . . .	40
*55. Ամառը գյուղում Մ. Հ. . . . .	41
56. Հավատարիմ ընկեր «Փայլուն առեվից» . . . . .	41
57. Մեր սրազրից (Ամառ) Մ. Հյուսե. . . . .	44
*59. Չորս յեղանակ «Մեր դպրոցից» . . . . .	46

III. Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

60. Կողմերն ու բանալին . . . . .	46
*61. Ծիծեռնակ (յերգ) Ղ. Ս. Ղալան . . . . .	47
62. Միասին Մ. Հ. . . . .	48
63. Ո՞ւմ է աշխատեցնում մարդը Մ. Հ. . . . .	49
64. Ի՞նչպես է փոխադրվում մարդը . . . . .	49
65. Աշխատանք փոխ. Մ. Հ. . . . .	50
66. Կար ու ձևի արհեստանոցում Ս. Քիբոզեհովա . . . . .	50
67. Փոքրիկ ձկնորսը Մ. Հյուսե. . . . .	52
68. Մաճկալը Մ. Հ. . . . .	53
*69. Խոտնակ թռչունը փոխ. Ս. Բ. Խնկոյան . . . . .	54
70. Լուսատուների վիճը Մ. Հյուսե. . . . .	54
71. Հրածինի պատմությունը Մ. Հյուսե. (նմանութ.) . . . . .	55
*72. Զաղաց Ս. Բ. Խնկոյան . . . . .	56

IV ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՑՎՆՔ

73. Ծնձղուկն ու դեղձանիկները «Մեր դպրոցից» . . . . .	56
74. Մեր դպրոցը Ս. Քիբոզեհովա և Մ. Հ. . . . .	57
*75. Ծիծեռնակների հարսանիքը Գ. Դեմիրճյան . . . . .	58
76. Արջն ու մեղուները Մ. Հյուսե. . . . .	59
*77. Մանկական Ինտերնացիոնալ (յերգ) փոխ. Գ. Ս. Բով . . . . .	60

Հ Ե Ք Յ Ա Թ

78. Սոված գայլը «Լայծերից» . . . . .	61
--------------------------------------	----

ՉԵՌԱՐՎԵՍՏԻ ՆՄՈՒՇՆԵՐ—(նկար, կտրվածք, փորվածք, ստիլիզացիա)  
—§§ 15, 29, 46, 53:

ՆԿԱՐՆԵՐ ՊԱՏՄԵԼՈՒ ՅԵՎ ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ—Եջ 9, 45:

ԻԼԼՈՒՍՏՐԱՏԻՎ ՏԱԽՏԱԿՆԵՐ—§§ 24, 30, 45:

ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐ

§§	Եջ	Բացատրություն
6	5	աթոռ
18	17	ջուր
28	24	ծուխ ու կրակ
31	26	գնացք
42	32	ջուրը
49	36	կազին, մեղրահաց
55	41	գրում
66	51	մկրատ
70	54	պատրույգ, ճրագի լույսը
72	56	ջրաղաց



8244